Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ՄԵԿՏԵՂՎԻ

Մեր գրական-մշակութային կյանքում քիչ կարելի է գտնել այնպիսի գործիչներ, որոնց կյանքն անցած լինի այդքան թափառիկ և, միաժամանակ, այդքան բեղմնավոր, որ–քան Ստեփան Ոսկանյանի կյանքը: Զմյուռնիա, Փարիզ, Պոլիս, կրկին Փարիզ, Տուրին, երրորդ անգամ Փարիզ, նորից Զմյուռնիա, Կահիրե – ահա նրա աստանդական կյանքի հիմնական հանգրվանները: Եվ կարևորն այն է, որ բոլոր այս քաղաքներում Ոսկանյանը ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն է ծավալել, հրատարակել կամ խմբագրել է պարբերականներ, բազմաթիվ ուշագրավ հոդվածներով հանդես է եկել տվյալ երկրում հրատարակվող թերթերում ու ամսագրերում, գրել է մեծ ու փոքր աշխատու–թյուններ և այլն:

Բնական է, որ Ոսկանյանով զբաղվող յուրաքանչյուրի համար առաջին հարցը պետք է լիներ ձեռք բերել նրա գրական ժառանգության հնարավորինս ամբողջական ու լրիվ հա–վաքածուն: Մի աշխատանք, որն ի դեպ, ամենևին էլ հեշտերից չէ: Եվ գոհունակությամբ կարելի է արձանագրել, որ սկսած 1902 թվականից, երբ հարցն առաջին անգամ պաշտոնա–պես բարձրացրեց Լեոն, առ այսօր քիչ գործ չի արված աշխարհի տարբեր ծայրերից այն հավաքելու, դասդասելու ու մեկտեղելու կապակցությամբ: Այս աշխատանքները առանձ–նապես ծավալվեցին մեր օրերում և հնարավոր եղավ Փարիզից ստանալ հրապարակա–խոսի հրատարակած «Արևմուտքի» պակասող համարները, Երուսաղեմից՝ «Օգյուստ Կոնտը Զմյուռնիայում և աթեիզմը» և «Պարոն Էմիլ Լիթրեն և աթեիզմը» փիլիսոփայական աշխատությունները, Տուրինից՝ «Իտալիա» ֆրանսալեզու թերթի մի քանի համարները և այլն:

Հայտնի է, որ 1850-ական թվականներին Ոսկանյանը թղթակցել է հրապարակախոս Արման Կարրելի և պատմաբան Լուի Տիերի հիմնադրած «Նասիոնալ» ֆրանսիական օրա–թերթին: «Նասիոնալը» գոյություն է ունեցել մինչև 1852 թ. դեկտեմբերի 2-ը, ուրեմն Ոսկան–յանը այդ թերթին թղթակցել է ամբողջ հինգ տարի: Թե ինչ հարցեր էր հայ հրապարա–կախոսը առաջ քաշում ֆրանսիական թերթում, չգիտենք: «Նասիոնալի» հավաքածու չկա մեզ մոտ և, բնականաբար, Ոսկանյանի այդ հոդվածները առայժմ մնում են տեսադաշտից դուրս:

1852 թ. վերջերին գալով Պոլիս, Ստեփան Ոսկանյանը ձեռնամուխ է լինում հռչակավոր գրող Էոժեն Սյուի «Թափառական հրեա» վեպի ֆրանսերեն բնագրից հայերեն թարգմանության աշխատանքներին: Գրասեր-հրատարակիչ Խաչատուր Ոսկանյանը հանձն է առնում կատարել հրատարակության հետ առնչվող աշխատանքները և 1854 թվականին Պոլսում հրատարակվում է «Թափառական հրեա»-ի՝ Ոսկանյանի կատարած թարգմանության առաջին հատորը: Թարգմանությունը և մանավանդ նրան կցված առաջաբանը մեծ քննարկումներ են առաջացրել ժամանակակիցների շրջանում, որոնք ամեն առիթով անսքող դրվատանքով են արտահայտվել այդ մասին:

Այսքանը գիտենք Ոսկանյանի վերոհիշյալ թարգմանության վերաբերյալ: Որտեղ է այդ արժեքավոր թարգմանությունը, ինչպես է այն թարգմանված, ինչպիսին է նրա առաջաբանը, որն այդքան մտքերի փոխանակության պատճառ է հանդիսացել – մայր հայրենիքի գիտնականները առայժմ կարող են միայն կռահել:

1860 թ. սկզբներին Ոսկանյանը Փարիզից գալիս է Իտալիա և Սարդինիայի Տուրին մայրաքաղաքում սկսում է թերթ հրատարակել: Թերթը եղել է ֆրանսերեն, ամենօրյա և կոչվել է «Իտալիա»: Թերթում հրատարակվող Ոսկանյանի հոդվածներն այնքան ուշագրավ են եղել, որ գրավել են կառավարության պրեմիեր մինիստր Կամիլլո Կավուրի ուշադրությունը, «որուն գրիչին ուժգնութենեն ահաբեկ (Ոսկանյանի. Ս.Շ.) մեծ դիվանագետը կը հանձնարարե օր մը «Զեռնոց դնել և այնպես ավելի մեղմ շարժել գրիչը»: Ոսկանյանը «Իտալիան» խմբագրել է շուրջ մեկ տարի:

Այս մասին էլ, դժբախտաբար, միայն այսքանը գիտենք: Եվ չնայած Տուրինի հայ մշակույթի բարեկամներից մեկը՝ պրն. Հայկ Շելլեֆյանը կարողացավ մեզ ուղարկել երկու օրինակ վերոհիշյալ թերթից, որտեղ, ի դեպ, Ոսկանյանի հոդվածներից չկար, բայց, ինչպես դժվար չէ կռահելը, դա դեռ հեռու է բավարար լինելուց: Որտեղ կարելի է գտնել Տուրինում հրատարակված «Իտալիա»-ի լրիվ հավաքածուն, ինչ հոդվածներով էր հանդես գալիս Ոսկանյանը այդ թերթում, որոնք այդպես անհանգստացրել էին Կավուրին – այս գայթակղիչ հարցերը առ այսօր մնում են անպատասխան:

1865 թվականին Ոսկանյանը բազում թափառումներից հետո վերջնականապես հաստատվում է իր ծննդավայրում՝ Զմյուռնիայում: Չորս տարի անց, 1869 թ. հունվարից Զմյուռնիայում ֆրանսերենով նա սկսում է հրատարակել «Ռեֆորմ» պարբերականը: «Ռեֆորմը» սկզբում եղել է շաբաթաթերթ, հետո՝ օրաթերթ, մի որոշ ժամանակ էլ հրատարակ–

վել է որպես երկշաբաթաթերթ և վերջապես վերածվել է շաբաթաթերթի: Ոսկանյանը «Ռե–ֆորմը» հրատարակել է մինչև 1901 թվականը, այսինքն՝ մինչև իր մահը, որտեղ և հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով: Եվ ստիպված ենք խոստովանել, որ ավելի քան երեսուն տարի հրատարակված այդ թերթից ոչ միայն ոչ մի օրինակ չունենք, այլև չգիտենք, թե աշխարհի որ գրադարանում կարելի կլինի գտնել դրա՝ քիչ թե շատ ամբողջական հավա–քածուն:

Ոսկանյանագիտության համար ոչ պակաս կարևոր է նաև «Աշխատանք» թերթի հավաքածուի հարցը:

1910 թ. հուլիսից Զմյուռնիայում սկսում է հրատարակվել «Աշխատանք» խորագիրը կրող գրական-հասարակական թերթը, որի առաջին իսկ համարից խմբագրությունը սկսում է հրատարակել Ոսկանյանի գրչին պատկանող անտիպ նյութեր՝ «Ստեփան Ոս–կանյանի անտիպ գործերեն» ընդհանուր խորագրի ներքո, որոնք թերթի խմբագրությանն էր տրամադրում հրապարակախոսի եղբայրը՝ Արտաշես Ոսկանյանը: Մեզ համար կարե–վորն այն է, որ «Աշխատանքը» խոստանում է նմանատիպ նյութեր հրատարակել նաև առաջիկա համարներում և պետք է ենթադրել, որ այդ խոստումը պարբերականը կատարել է: Այստեղից էլ սկսվում է ամբողջ պատմությունը: Բանն այն է, որ Հայաստանի գրապա–հոցներում «Աշխատանքի» սկզբնական շրջանի մի քանի համարները կան միայն և բնա–կանաբար, արդեն չեն կարող որոշել, թե թերթն ինչ ձևով ու տարողությամբ է կատարել իր խոստումը: Գայթակղիչ հարցերը ծագում են անմիջապես. ինչ անտիպ նյութեր է հրատա–րակել «Աշխատանքն» իր հետագա համարներում, որտեղ կարելի կլինի գտնել այդ պարբե–րականի հավաքածուն, քանի որ այն հրատարակվել է մինչև 1920 թվականը, ինչ չափով է իրականացվել այդ անտիպ նյութերի հրատարակությունը: Հարցեր են սրանք, որոնք առ–այժմ մնում են անպատասխան:

Վերոհիշյալի օրգանական շարունակությունն է հանդիսանում, վերջապես, նաև Ոս–կանյանի արխիվի հետ կապված պատմությունը:

Ոսկանյանի մահվանից հետո նրա հարուստ արխիվը (մեկ անավարտ վեպ, շուրջ հարյուր բանաստեղծություններ և «այլ գրություններ») հանձնվեց նրա քեռորդուն՝ Կարապետ Ղոնճայանին, որը և ձեռնամուխ եղավ մեկ հատորով այն հրատարակելու աշխատանքնե–րին: Մեզ անհայտ պատճառներով, սակայն, հատորի հրատարակման գործը ձախողվում է, և Ղոնճայանը իր մոտ եղած արխիվը հանձնում է Արտաշես Ոսկանյանին (որտեղից էլ

նա նյութեր էր տրամադրում «Աշխատանքին»), որի մոտ էլ այն մնում է մինչև 1910 թվակա–նը: Ի՞նչ եղավ այնուհետև այդ թանկարժեք արխիվը, արդյո՞ք այն շարունակում է գտնվել Արտաշես Ոսկանյանի ժառանգների մոտ, կամ գուցե որոշ տեղեկություններ կհաղորդեն Ղոնճայանի հաջորդները – Հայաստանի գիտնականները կարող են միայն ենթադրություն–ներ անել:

Ոսկանյանին վերաբերող «անհայտներ» էլի կարելի է նշել, բայց ասվածն էլ բավա–կան է ցույց տալու համար, որ մեր ականավոր հրապարակախոսի գործունեությունը ըստ ամենայնի բացահայտել և ուսումնասիրել կարողանալու համար միայն Հայաստանի գիտ–նականների ջանքերը չեն կարող բավարար լինել: Գործին սրտացավորեն ու ջերմեռան–դությամբ պետք է լծվեն հայ մշակույթի մեր սփյուռքահայ բարեկամները, որոնց արած մեծ գործը, ի դեպ, վեր է ամեն գովասանքից: Միայն համատեղ ու միասնական ջանքերով և սփյուռքահայ մեր բարեկամների հոգածու օգնության շնորհիվ մենք կկարողանաք գեթ փոքր չափով լրացնել Ոսկանյանի գրական-հասարակական ժառանգության պակասող օղակները և ուրեմն՝ մոռացումի դաժան ճիրաններից փրկել մի պայծառ անուն ևս:

Հայրենիքի ձայն

1973, № 10, մարտի 7